ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
Բաց Բաժնետիրական Ընկերություն
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 87 շենք, թիվ 85, հեռ. 54-78-95, ֆաքս 54-78-94, էլ. փոստ
araratbank@araratbank.am
Հաշվետվություն թիվ 10, 09.08.2022թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 04.03.2022թ. որոշում (որոշում **ՈՐԽ0102-03/Լ**) Մասիս մասնաճյուղի կանոնադրությունում փոփոխություն կատարելու մասին:

AraratBank
0002, ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 87 շենք, 85 տարածք (+374)10 59 23 23 info@araratbank.am | araratbank.am

ք.Երևան

Կոդ: ՈՐԽ0102-03/Լ
Դաս: ԾԳ
«04» մարտի 2022թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՈՒՐԴ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՄԱՍԻՍ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 21[6]-ի 1-ին մասի ժդ) կետը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կանոնադրության 12.1 կետի ժդ) ենթակետը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախատեսվում է Մասիս մասնաճյուղի գործունեությունը նոր տարածքում ծավալել՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 2010 թվականի օգոստոսի 11-ի թիվ 23/02 որոշմամբ հաստատված Մասիս մասնաճյուղի կանոնադրությունը հաստատել նոր խմբագրությամբ (կցվում է):
2. Հանձնարարել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Գործադիր տնօրեն Միեր Անանյանին ապահովել Մարզ Արարատ, համայնք Մասիս ք. Կենտրոնական հրապարակ, թիվ 15/5, 15/3 հասցեում բանկային գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը և ապահովել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Մասիս մասնաճյուղի նոր խմբագրությամբ հաստատված կանոնադրության գրանցման հետ կապված գործընթացը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Խորհրդի նախագահ՝ **Գ. Հովհաննիսյան**